

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 13-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Թուրքիայի հայոց Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը:

Նույն օրը պատրիարք հոր հետ Մայր Աթոռ է ժամանում գերաշնորհ Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը:

Պատրիարք սրբալան հորը և Տ. Տիրան սրբազանին Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորում է Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Տ. Ներսես եպս. Պոլապայանի:

Մայր տաճարի շքամուտքի առաջ, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի գլխավորությամբ, եկեղեցական թափորը «Հրաշափառ» շարական-երգով Ամենապատիվ սրբազան հորն առաջնորդում է Մայր տաճար, ուր Իջման Ս. Սեղանի առաջ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը ողջունում է մեծապատիվ հյուրերին հետևյալ խոսքերով.

«Թույլ տվեք այս ուրախ պահին, հանուն Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռիս միաբանության, ուսանողության և ներկա հավատացյալների, սրտագինս ողջունել Ձեզ, սրբազան պատրիարք և գերաշնորհ Տ. Տիրան արքեպ. Ներսոյան, և բարի գալուստ մաղթել ի Ս. Էջմիածին:

Սրբազան պատրիարք, շատ անգամներ եք Դուք եկել Մայր Աթոռ Ս. Էջմիածին ու ամեն անգամ Ձեր բարի գալստյամբ ուրախություն և ոգևորություն եք պարգևել մեզ բոլորիս: Դուք այժմ գտնվում եք այն եկեղեցում, որն ամենից նվիրականն է և մայրը Հայաստանյայց բոլոր եկեղեցիների, քանի որ այստեղ իջավ Միածինը և հաստատեց այս Եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռքով:

Ես սրտանց մաղթում եմ, որ Աստված Ձեր այս բարի այցը օրհնությամբ պսակի: Ձեզ ցանկանում եմ քաջառողջություն և արևշատություն, որպեսզի Ձեր ողջ ժողովուրդը միշտ հոգևոր մխիթարություն ստանա Ձեր Ամենապատվությունից»:

Այնուհետև պատասխան շնորհակալական խոսք է ասում Ամեն. Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը. «Ինձի համար մեծ երջանկություն է անգամ մը ևս գտնվիլ այս նվիրական, սրբազան հարկի ներքև: Ինձի համար նաև մեծ երջանկություն է, որ կաշխատինք Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Մեսրոպի ջահը վառ պահել մեր հավատացյալներու հոգիներուն մեջ: Մեր ժողովուրդը ոչ միայն հավատարիմ քաղաքացին է իր երկրին և իր քաղաքացիական պարտականությունները լիովին կկատարե այնտեղ, այլ նաև հոգևոր ձևով սրտանց կապված է այս վերին և գերագույն կեդրոնին, ուրկե քրիստոնեական հավատքը ծագեցավ Հայաստան աշխարհին: Հետևաբար ես կբերեմ ձեր եղբայրներուն և կրոնակիցներուն ու ամենքիդ սիրալիր ողջույններ:

Այս սրբատաշ քարերեն ուղղակի կորություն կներարկվի մեր բնության մեջ, և մենք երջանկությամբ ու նվիրումով կհամբուրենք այս սրբատաշ քարերը և այս Սուրբ Խաչը: Այո՛, մենք այս հարկի տակ իրապես կզգանք մշտնջենական ներկայությունը աստվածային Աջին»:

Պատրիարք սրբազանը հոգեկան գոհունակությամբ է նշում, որ այս ուրախ առիթով իր հետ Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելել Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը:

Իր խոսքի վերջում Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոսը մաղթում է, որ Աստուծո պահպանիչ Աջը միշտ անսասան պահի Հայ Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Այնուհետև իր մաղթանքն է հղում Հայոց Հայրապետին՝ ցանկանալով Նրան հաջողություններ, արևշատություն, որպեսզի նա իմաստությամբ առաջնորդի Հայաստանյայց Եկեղեցին:

Ապա պատրիարք սրբազան հայրը հանդիսավոր թափորով առաջնորդվում է Վեհարան: Վեհարանի մուտքի մոտ Վեհափառ Հայրապետը ընդունում է նրան եղբայրական ջերմ սիրով ու ողջագուրումով: